

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքի) 2-րդ հոդվածի “իա” կետում՝

1. առաջին նախադասությունը “ժամանող” բառից առաջ լրացնել “մշտական բնակության” բառերով.

2. երկրորդ նախադասությունը “ֆիզիկական անձանց” բառերից առաջ լրացնել “Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող” բառերով:

3. երկրորդ նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը»:

Հոդված 2. Օրենսգրքի 26-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը “ծագման” բառից հետո լրացնել “, ինչպես նաև “ներմուծում՝ ազատ շրջանառության համար” մաքսային ռեժիմով ներմուծված եւ “վերաարտահանում” մաքսային ռեժիմով արտահանված” բառերով.

2. 2-րդ մասի “ա” կետը լրացնել հետևյալ բառերով՝

“, ինչպես նաև բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի “ե” կետով սահմանված դեպքի.”.

3. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ “ե” կետով՝

ե) նախկինում “ներմուծում՝ ազատ շրջանառության համար” մաքսային ռեժիմով ներմուծված եւ “վերաարտահանում” մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների ներմուծման դեպքում գանձվում են միայն օրենքով սահմանված կարգով արտահանման ժամանակ վերադարձված մաքսային վճարները”:

Հոդված 3. Օրենսգրքի 36-րդ հոդվածում՝

1. առաջին նախադասության “ժամանակավոր պահպանմանը” բառերը փոխարինել “պատասխանատու պահպանությանը” բառերով.

2. “ա” կետում “վճարել” բառը փոխարինել “այդ ապրանքները վերահայտարարագրել “ներմուծում՝ ազատ շրջանառության համար” մաքսային ռեժիմով՝ վճարելով” բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի “բ” կետում՝

1. առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝

“Սույն կետով սահմանված դրույթը չի տարածվում Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա պետությունների պատվո հյուպատոսների և պատվո հյուպատոսարանների աշխատակիցների կողմից ներմուծվող ապրանքների վրա”:

2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝

“Օտարերկրյա անձանց կողմից ”ժամանակավոր ներմուծում” մաքսային ռեժիմով ներմուծվող ԱՏԳ ԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների բացթողումը թույլատրվում է հայտարարատուի խնդրարկած, սակայն օտարերկրյա անձի Հայաստանի Հանրապետությունում գտնվելու՝ օրենքով սահմանված ժամկետից ոչ ավելի ժամկետով:”:

Հոդված 5. Օրենսգրքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

“Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում մշտապես հաշվառված կամ մշտապես բնակվող անձանց կողմից “ժամանակավոր ներմուծում” մաքսային ռեժիմով ԱՏԳ ԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով:

Սույն հոդվածի իմաստով մշտապես բնակվող է համարվում Հայաստանի Հանրապետությունում վերջին մեկ տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 180 և ավելի օր գտնվող անձը:”:

Հոդված 6. Օրենսգրքի 67.2-րդ հոդվածի 3-րդ մասի ”դ” կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասը ”մասնագետի” բառից առաջ լրացնել ”ձևակերպումների” բառով:

Հոդված 8. Օրենսգրքի 97.1-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունը ”դեպքի” բառից հետո լրացնել ”, ինչպես նաև այն դեպքի, երբ սույն կետի առաջին պարբերությունում նշված ապրանքները և տրանսպորտային միջոցները հանձնվում են սույն օրենսգրքի 170-177-րդ հոդվածներով սահմանված մաքսային արտոնություններից օգտվող անձանց միջև:” բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 102-րդ հոդվածի աղյուսակում.

1) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 17-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.				
1702 30	Գլյուկոզա և գլյուկոզային օշարակ, ֆրուկտոզա	0		0
	չպարունակող կամ ոչ ավել 20 տոկոս ֆրուկտոզա			
	պարունակող չոր վիճակում			
2) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 1904-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝				
1905	Հաց, ալյուրով պատրաստված, հրուշակեղեն, թխվածքներ, բլիթներ եւ այլ հացաբուլկեղեն ու կակաո պարունակող կամ չպարունակող հրուշակեղեն. վաֆլիի սկավառակներ, դեղագործական նպատակներով օգտագործելու համար պիտանի դատարկ պատիճներ, վաֆելային բոլորաթերթեր ծրարելու համար, բրնձաթուղթ եւ համանման մթերքներ	10		0
3) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 73-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.				
7321	Ջեռուցող վառարաններ, ջեռուցման ու եփման վառարաններ և սննդի պատրաստման վառարաններ (այդ թվում վառարաններ՝ կենտրոնական ջեռուցման օժանդակ կաթսաներով), ֆրիտյուրնիցաներ, թավաներ, վառարանների ջեռակներ, սննդի տաքացման համար տաքացուցիչներ և համանման կենցաղային	10		0

սարքավորումներ ոչ էլեկտրական, և դրանց մասերը՝ ևս մետաղներից

8414	4) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 84-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.		
	Պոմպեր վակումային եւ օդային. այլ օդային եւ գազային կոմպրեսորներ եւ օդափոխիչներ. օդափոխիչ կամ օդաքաշ պահարաններ օդափոխիչներով եւ քամիչով կամ առանց դրա	10	0
8417	5) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 8415-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.		
	Ջեռոցներ և վառարաններ արդյունաբերական կամ լաբորատոր, ներառյալ թափոնների այրման վառարաններ, ոչ էլեկտրական	10	0
8419	6) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 8418-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.		
	Արդյունաբերական կամ լաբորատոր մեքենաներ, սարքավորումներ էլեկտրական կամ ոչ էլեկտրական տաքացումով՝ ջերմաստիճանների փոփոխման ուղիով նյութերի մշակման համար (տաքացում, եփում, թորում, բազմաթորում, մանրեագերծում, վարակազերծում, շոգեհարում, չորացում, գոլորշացում, խտացում կամ սառեցում), բացառությամբ տնային օգտագործման սարքավորումների. ջրատաքացուցիչ սարքեր՝ ոչ էլեկտրական.	10	0
8419 20 000	Բժշկական մանրէազերծիչներ՝ վիրաբուժական կամ լաբորատորային	0	0
8419 90 150	8419 20 000 ծածկագրին դասվող մանրէազերծիչների մասեր	0	0
8544	7) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 8544-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.		
	Հաղորդալարեր մեկուսացված (ներառյալ արծնապատները կամ անոդավորվածները), կաբելներ (ներառյալ կոաքսիալային) եւ այլ մեկուսացված էլեկտրական հաղորդիչներ միացնող դետալներով կամ առանց դրանց. կաբելներ թելքաօպտիկական, կազմված թելքից անհատական պատյաններով, անկախ հավաք են թե ոչ էլեկտրահաղորդիչների կամ միացնող տարրերի հետ	10	0
8) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 8544-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.			

8544 42 100	1000 Վ-ից ոչ ավելի լարման համար էլեկտրական հաղորդիչներ՝ համալրված միացնող դետալներով՝ հեռահաղորդակցության մեջ օգտագործվող	0	0
8544 49 200	Այլ էլեկտրական հաղորդիչներ 80 Վ-ից ոչ ավելի լարման համար՝ հեռահաղորդակցության մեջ օգտագործվող	0	0
8544 70 000	Օպտիկա-թելքային կաբելներ	0	0

9) «Ծածկագիրն ըստ ԱՏԳԱԱ-ի» 190531-րդ, 190532-րդ, 8443 31 910-րդ տողերը հանել:

Հոդված 10. 105-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի "50 հազ. դրամը" բառերը փոխարինել "150 հազ. դրամը" բառերով.

2. 6-րդ մասի 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը պետք է ներմուծվի մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետությունում հաշվառվելու օրվան նախորդող կամ հաջորդող 180 օրերի ընթացքում:"

Հոդված 11. 128-րդ հոդվածում՝

1.2-րդ մասի "կամ բանավոր" բառերը փոխարինել ", բանավոր կամ էլեկտրոնային եղանակով" բառերով.

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով՝

"4. էլեկտրոնային եղանակով ներկայացված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմինների կողմից ընդունվելուց հետո համարվում է մաքսային հսկողության համար անհրաժեշտ իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ:"

Հոդված 12. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 139.1-րդ հոդվածով.

Հոդված 139.1 ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՊԵՏԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Արգելվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնումը, բեռնաթափումը, փոխաբեռնումը, փաթեթների վնասվածքների վերացումը, փաթեթների բացումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը. կամ այդ ապրանքների կամ դրանց ուղեկցող փաթեթների վրա դրված մաքսային ապահովման միջոցները փոխելը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ապրանքները և տրանսպորտային միջոցները կորցնելու դեպքում անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:"

Հոդված 13. Օրենսգրքի 141-րդ հոդվածում՝

1.1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝

"Հայտարարատուն պարտավոր է սույն հոդվածում նշված փաստաթղթերը և տեղեկությունները, ինչպես նաև ապրանքները և տրանսպորտային միջոցները մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագիրն ընդունելուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել մաքսային հսկողության:"

2. 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում "նրա տեղակալի" բառերը փոխարինել "նրանց տեղակալների" բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 148-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 148. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինները մաքսային հսկողության իրականացման ժամանակ կիրառում են ընտրողականության սկզբունքը:

2. Մաքսային հսկողության ձևերի ընտրության ժամանակ կիրառվում է ռիսկերի կառավարման համակարգ:

3. Ռիսկերի կառավարման համակարգն ուղղված է մաքսային մարմինների ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու միջոցով օրենսդրության այն խախտումները վերացնելուն, որոնք՝

1) ունեն կրկնվող բնույթ.

2) կապված են մաքսային վճարներից խուսափելու հետ.

3) կապված են տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովման հետ:

4. Ռիսկերի գնահատման չափանիշների մեթոդաբանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը, որի հիման վրա վերադաս մաքսային մարմինը հաստատում է ռիսկերի գնահատման աստիճանները:»:

Հոդված 16. Օրենսգրքի 173-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով.

՝3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա պետությունների պատվո հյուպատոսների և պատվո հյուպատոսարանների աշխատակիցների կողմից ներմուծվող ապրանքների վրա:

4. Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա պետությունների պատվո հյուպատոսարանները առանց մաքսային վճարների վճարման կարող են ներմուծել հյուպատոսական հիմնարկի պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքներ՝ պետական զինանշաններ, դրոշներ, ցուցանակներ, կնիքներ և դրոշմակնիքներ, գրքեր, պաշտոնական տպագիր նյութեր, գրասենյակային կահույք, գրասենյակային սարքավորում և այլ նման առարկաներ, որոնք հյուպատոսական հիմնարկը ստանում է ուղարկող պետությունից կամ վերջինիս պահանջով:»:

Հոդված 17. Օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 18. Օրենսգրքի 194-րդ հոդվածի "մաքսային մարմնի պահանջով" բառերը հանել:

Հոդված 19. Օրենսգրքի 195-րդ հոդվածը "միջոցները" բառից հետո լրացնել "և ուղեկցող փաստաթղթերը" բառերով:

Հոդված 20. Օրենսգրքի 224-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անձը, որից սույն օրենսգրքի 212-րդ հոդվածով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձման ապահովման նպատակով վերցվել են ապրանքներ՝ անկախ սեփականության պատկանելությունից, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:»:

Հոդված 21. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Մեկնաբանություն
Հայաստանի Հանրապետության կառավարություն	1. Առաջարկվում է որոշ ապրանքատեսակների, մասնավորապես, ԱՏԳ ԱԱ 1905, 7321, 8414, 8417, 8419, 8544 ծածկագրերին դասվող որոշակի ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափը բարձրացնել՝ 0-ից դարձնելով 10 տոկոս, իսկ ԱՏԳ ԱԱ 1702 30 ծածկագրին դասվող ապրանքի համար իջեցնել՝ 10-ից 0 տոկոս: 2. Նախագծի 1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով. «3. Երկրորդ նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. Ընդ որում անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:»: Նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ. «Հոդված 5. Օրենսգրքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով. “Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում մշտապես հաշվառված կամ մշտապես բնակվող անձանց կողմից “Ժամանակավոր ներմուծում” մաքսային ռեժիմով ԱՏԳ ԱԱ	1. Առաջարկվող ապրանքատեսակները հիմնականում այն ապրանքներն են (հրուշակեղեն, թխվածքներ, բլիթներ, վաֆլիի սկավառակներ, ջեռուցող վառարաններ, պոմպեր եւ այլն), որոնք արտադրվում են կամ կարող են արտադրվել Հայաստանի Հանրապետությունում կամ ունեն կենցաղային սպառման նշանակություն, ինչպես նաեւ հանդիսանում են հումքային եւ այդ նպատակով վերջիններիս ներմուծման համար առաջարկվում է մաքսատուրք չգանձել 2. Առաջարկությունը ներկայացվել է՝ վերացնելու համար այն դեպքերը, երբ որպես Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը որպես անձնական օգտագործման գույք, տվյալ դեպքում՝ ավտոմեքենա, ձեռք բերի հանրապետություն ժամանելուն նախորդող ժամանակահատվածում մեկ այլ երկրից, մասնավորապես, հարեւան երկրներից, դրանով ազատվելով համապատասխան վճարումներ կատարելուց Լրամշակվել է՝ որոշակի հարցերի կարգավորման նպատակով

	8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով: Սույն հոդվածի իմաստով մշտապես բնակվող է համարվում Հայաստանի Հանրապետությունում վերջին մեկ տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 180 և ավելի օր գտնվող անձը:”:	
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Գ. Մելիքյան	1. Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. “Հոդված 2. Օրենսգրքի 26-րդ հոդվածի՝ 1. 1-ին մասը ”ծագման” բառից հետո լրացնել “, ինչպես նաև “Ներմուծում” ազատ շրջանառության համար” մաքսային ռեժիմով ներմուծված և “Վերաարտահանում” մաքսային ռեժիմով արտահանված” բառերով. 2. 2-րդ մասի՝ 1) “ա” կետը լրացնել հետևյալ բառերով. “, ինչպես նաև բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի ”ե” կետով սահմանված դեպքի.”. 2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ ”ե” կետով. “ե) Նախկինում “Ներմուծում” ազատ շրջանառության համար” մաքսային ռեժիմով ներմուծված և “Վերաարտահանում” մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների ներմուծման դեպքում գանձվում են միայն օրենքով սահմանված կարգով արտահանման ժամանակ վերադարձված մաքսային վճարները և մաքսավճարը:”: 2. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետը “սակայն” բառից հետո լրացնել “օտարերկրյա անձի” բառերով: 3. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ	1. Ընդունվել է մասնակի, կատարվել են համապատասխան փոփոխություններ Մաքսավճարի գանձման առաջարկվող դրույթը չի ընդունվել, քանի որ նախագծով առաջարկվող լրացման նպատակը հարկերի կրկնակի գանձումից խուսափումն է, իսկ մաքսավճարը վերադարձման ենթակա գումար չի հանդիսանում եւ առաջարկության ընդունման դեպքում կստացվի, որ նույն ապրանքի ներմուծման դեպքում մաքսավճարը գանձվում է կրկնակի

	խմբագրությամբ. “2. 6-րդ մասի 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ “Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը պետք է ներմուծվի մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետությունում հաշվառվելու օրվան նախորդող կամ հաջորդող 180 օրերի ընթացքում:”:	2. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն 3. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ա. Նռանյան	1. ՀՀ սահմանամերձ շրջաններում լայնորեն տարածված է այլ երկրների պետհամարանիշներով ավտոմեքենաների օգտագործումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ շրջաններում առկա է սոցիալական ոչ այնքան բարենպաստ իրավիճակ, ապա սույն օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների կիրառումը կարող է առաջացնել լուրջ դժվարություններ: Առաջնորդվելով վերը նշվածով՝ առաջարկվում է մաքսային ցածր արժեք ունեցող մեքենաների մաքսազերծման համար սահմանել ավելի երկար ժամկետ՝ մինչև մեկ տարի: 2. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող «150 հազ. դրամը» բառերը փոխարինել «300 հազ. դրամը» բառերով: Նույնատիպ փոփոխություն կատարել նաև ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասում՝ «150 հազ. դրամը» բառերը փոխարինելով «300 հազ. դրամը» բառերով:	1. Չի ընդունվել, քանի որ այդ դեպքում մտավախություն կա, որ ավտոմեքենաները Հայաստանի Հանրապետություն կներմուծվեն միայն սահմանամերձ շրջաններում գրանցված անձանց անունով 2. Չի ընդունվել, քանի որ արդեն իսկ արտոնության շենք նախատեսվել է բարձրացնել 3 անգամ՝ 50.000 դրամից դարձնելով 150.000 դրամ Առանց մաքսատուրքի վճարման՝ նախատեսված 150.000 դրամ մաքսային արժեքով ուղեկցող բեռի համար մաքսային արժեքի մինչև 300.000 դրամի բարձրացումը կարող է չարաշահումների տեղիք տալ եւ հնարավոր է, որ այդ գումարով Հայաստանի Հանրապետություն ներմուծվեն առետրային քանակության

	3. Առաջարկվում է պարզեցնել ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ընթացակարգը:	ապրանքներ 3. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լ. Ալավերդյան	Ներկայացված նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. “Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցող անձի կողմից “Ժամանակավոր ներմուծում” մաքսային ռեժիմով ներմուծված ԱՏԳ ԱԱ 8702 եւ 8703 ծածկագրերի դասվող ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարվա ընթացքում կարող է գտնվել ոչ ավելի, քան երեք ամիս: Հետագայում ներմուծման ռեժիմը փոխելու դեպքում անձը պարտավոր է վճարել տույժեր՝ հաշվարկված ներմուծման պահից:”	Չի ընդունվել: Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշված հոդվածը լրամշակվել է